

тавленный вариант можно использовать при оценке, прогнозировании и управлении риска.

## INFLUENCE OG THE HAZARDS AND ITS CLASSIFICATION

*R. Ch. Gaginyan*

The hazard is arranged in the work from different views: like a danger, possibility, uncertainty, it is given different explanations of the terms of hazard. The existing hazards are different and can be arranged by different criteria. It has been attempted to create the new integrated scheme, which mainly would include all possible criteria of hazard. Presented in article method can be used in the rating, forecasting and managing of the hazards.

# ՀՅ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԱՐՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԵՐԵՎՈՒՅԹԱՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

**Ա. Ա. ՌՍԿՄՆՅԱՆ**  
*ԳՊՀ լաբորատոր*

Հայաստանի Հանրապետությունում աղքատությունն առավել տարածված է սահմանամերձ, աղետի և բարձր լեռնային (ավելի քան 1700մ բարձրության վրա գտնվող) բնակավայրերում: Այն փաստը, որ Գեղարքունիքի մարզի 91 համայնքներից 42-ն Աղրբեջանին սահմանամերձ են, իսկ 49-ը գտնվում են բարձրադիր լեռնային գոտում, ի սկզբանե ավելացնում է մարզի աղքատության հակվածության աստիճանը:

Գեղարքունիքի մարզն Աղրբեջանի հետ ունի մոտ 400 կմ ընդհանուր սահման: Աղրբեջանի հետ սահմանակից է մարզի բնակավայրերի գրեթե կեսը: Սրա արդյունքում են առաջացել աղքատածին այնպիսի գործոններ, ինչպիսիք են ռազմական գործողությունների հետևանքով վնասված հայուրավոր տներն ու հանրային շինությունները, ականապատվածության ու գնդակոծության վտանգի պատճառով չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության զգալի հողատարածքների առկայությունը, հազարավոր տեղահանվածները:


Սահմանամերձ բնակավայրերում առկա արտագաղթի հիմնական պատճառներն աղքատության բարձր նակարդակն է և անբավարար աշխատատեղերը: Գործազրկությունն աղքատության ամենակարևոր պատճառներից է: Ըստ ՀՅ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՅ զբաղվածության ծառայություն» գործակալության Գեղարքունիքի մարզի տարածքային կենտրոնից ստացված տվյալների՝ սահմանամերձ համայնքներում 2009 թվականին գործազրկի կարգավիճակ ուներ 697 մարդ: Տվյալները վերաբերվում են պաշտոնապես գրանցված գործազրկությանը, սակայն այս թիվը հեռու է իրականու-

թյունից: Նախ, գործազուրկների մի մասն ուղղակի գրանցված չէ, մի մասն իրականում գործազուրկ է, սակայն չի գրանցվում, որովհետև այն ընտանիքը, ուր նրանք ապրում են, ունի մի փոքր հողակտոր, որը, կապված վտանգավորության հետ, կարող է նաև չնշակվել: Սահմանամերձ գոտու հողակտորի մի մասը գտնվում է թշնամու հաճախակի գնդակոտության տակ: Նույնիսկ, եթե այդ հողակտորը մշակվի, այն ընտանիքի կարիքները չի կարող բավարարել, քանի որ ցածր է եկամտաբերությունը, հեռու է շուկան, փոքր է հողի չափը: Ահագնացող չափերի է հասել արտագաղթը: Ընդ որում, արտագաղթում են երիտասարդ տղամարդիկ, որոնց, ընտանիքների վերամիավորման նպատակով, հետագյում միանում են նաև վերարտադրողական տարիքի կանայք: Բնակավայրերը մնում են առանց պաշտպանի, դրանք աստիճանաբար վերածվում են «ծերանոցի»: Ստորև բերված ցուցանիշները վկայում են, որ ամբողջ հանրապետությունում նկատվող բնակչության «ծերացումը» ավելի մեծ ծավալներով արտահայտվում է նաև Գեղարքունիքի մարզում, մասնավորապես՝ սահմանամերձ բնակավայրերում:

**Գեղարքունիքի մարզի սահմանամերձ բնակավայրերի բնակչության  
սեռատարիքային կազմը (2009թ.)**


*Տղամարդկանց բաշխումն ըստ տարբային խմբերի (%)*

**Գծ. 1**



Կանանց բաշխումն ըստ տարբային խմբերի (%)

**Գծ. 2**




Ինչպես երևում է գծապատկերներից, տղամարդկանց ընդհանուր թվաքանակի 29.2%-ը կազմել են աշխատանքային տարիքից ցածր, 56.2%-ը՝ աշխատունակ տարիքի, 14.7%-ը՝ աշխատունակ տարիքից բարձր տարիք ունեցող տղամարդիկ: Կանանց ընդհանուր թվաքանակի 27.5%-ը կազմել են աշխատանքային տարիքից ցածր, 52.8%-ը՝ աշխատունակ տարիքի, 19.7%-ը՝ աշխատունակ տարիքից բարձր տարիք ունեցող կանայք:

Սահմանամերձ բնակավայրերում նույնիսկ միգրացիայի բացասական ցուցանիշի պայմաններում գրանցվել է ծննդիության աճ: Այսպիսի օրինաչափություն դիտվում է պատերազմներից հետո, երբ մարդիկ փորձում են լրացնել մարդկային կորուստները:

**Ծնվածների թվաքանակի փոփոխությունը  
սահմանամերձ բնակավայրերում**

**Գծ. 3**



Գործազրկությունը լրջագույն խնդիր է այսօր, որն իր բացասական ազդեցությունն է ունենում բնակչության կենսագործունեության վրա: Բացի ակնառու տնտեսական հետևանքներից, այն ունի մի շարք բացասական սոցիալական հետևանքներ՝ աշխատանքային գործունեության դադարեցումը մեկից ավելի տարով բերում է մասնագիտական հնտությունների կորստի, հասարակության մեջ սոցիալական դիրքի նվազման, ցածր ինքնազմահատականի ձևավորման, սրբեսների և այլն: Չնայած նրան, որ գործազրկությունը վերջին տարիներին ունի նվազման միտում, այնուամենայնիվ սոցիալական վիճակի կտրուկ փոփոխություն դեռևս չի նկատվում:

Աղքատության մակարդակի, նրա խորացման վրա ազդում են նաև բնակչության կրթություն ստանալու, առողջության բավարար մակարդակ ապահովելու, երկրի հասարակական կյանքին ակտիվ մասնակցություն ունենալու սահմանափակ հնարավորությունները: Մարզի որակավորված, ֆիզիկապես առողջ աշխատության վերարտադրման ու զարգացման, տնտեսական ակտիվության մակարդակի բարձրացման և, ընդհանրապես, բնակչության սոցիալական վիճակի բարելավման կարևոր պայմաններից են մարզի սոցիալական ոլորտի, հատկապես առողջապահության, կրթության և սոցիալական պաշտպանության համակարգերի արդյունավետ գործունեությունն ու զարգացումը:

Որքան բնակավայրերը հեռու են մարզկենտրոնից և մայրաքաղաքից, այնքան այդ համայնքները և, հետևաբար, բնակավայրի բնակչությունն ավելի են հակված աղքատության: Սահմանամերձ բնակավայրերի մեկուսացվածությունը պայմանավորված է ոչ միայն մարզկենտրոնից և մայրաքաղաքից ունեցած հեռավորությամբ, այլև առավելապես այդ հեռավորությունները կապող ճանապարհների անմիտիքար վիճակով, իսկ առանձին դեպքերում նաև որոշ հատվածների իսպառ բացակայությամբ: Այս առումով աղքատության և ճանապարհային ցանցի վիճակի միջև առկա կապն ուղղակի է: Դաշվի առնելով բնակավայրերի տարածքային ցրվածությունն ու մեծ հեռավորությունը մարզկենտրոնից, մարզի քաղաքներից և մայրաքաղաքից՝ ճանապարհների բարեկարգվածության և նոր ճանապարհների կառուցման խնդիրը դաշնում է գերակա՝ բնակչության և բնակավայրերի տնտեսական ակտիվության խթանման և մեկուսացվածության վերացման հարցում:

Սահմանամերձ բնակավայրերում աղքատության բարձր մակարդակը պայմանավորված է նաև Աղրբեջանից վերաբնակեցվածների մեծ տեսակարար կշռով: Գեղարքունիքի մարզում բնակվող Աղրբեջանից վերաբնակեցվածների թվաքանակը գերազանցում է հանրապետության մյուս մարզերի ցուցանիշներին: Բռնագաղթին հաջորդող տարիներին սահմանամերձ բնակավայրերում բնակվում էին շուրջ 25 հազար Աղրբեջանից վերաբնակեցվածներ: Վերջին տարիներին նրանց թիվն ավելի քան երեք անգամ կրճատվել է, որի հիմնական պատճառն ինտենսիվ արտագաղթն է: Դատկանշական է, որ տարվա ընթացքում Աղրբեջանից վերաբնակեցվածների թիվը փոխվում է նաև կապված նրանց սեզոնային արտագնա աշխատանքի մեկնելու փաստի հետ: Աղրբեջանից վերաբնակեցվածների արտագաղթի և արտագնա աշխատանքի մեկնելու հիմնական պատճառն աշխատատեղերի բացակայությունն է: Գործազրկությունը վերաբնակեցված ընտանիքների մեջ մասին դրեց ծայրաստիճան կարիքի և զուկանք-

ների մեջ: Կարևոր պատճառներից են նաև բնակարանային վիճակը, սոցիալական, կենցաղային տարրական պայմանների բացակայությունը, վերաբնակեցված կանանց առանձնահատուկ ծանր սոցիալական վիճակը, գյուղական բնակավայրերում անասունների և հողատարածքների խիստ պակասը: Աղբբեջանից վերաբնակեցվածների որոշ մասն առ այսօր ապրում է տարբեր գերատեսչություններին պատկանող հանրակացարաններում, առողջարաններում, հյուրանոցներում, պանսիոնատներում, ինքնաշեն կացարաններում:

Մարզի սահմանամերձ տարածաշրջաններից առավել ծանր կացության մեջ են գտնվում ռազմական գործողություններից տուժած, այսպես կոչված, հետրախումնային բնակավայրերի համայնքները: Սահմանին առավել մոտ գտնվող բնակավայրերում շարքից դուրս են եկել բնակարանային ֆոնդի մի զգալի մասը, ճանապարհները, խմելու ջրագծերը, կոյուղագծերը, առողջապահական, մշակույթային և կենցաղային օջախները: Հարյուրավոր մարդիկ ստիպված են եղել հեռանալ իրենց բնակավայրերից: Նրանց մոտ 40%-ը հետագայում ինքնուրույն հետ է վերադարձել: Մնացածները կազմում են, այսպես կոչված, «ներքին տեղահանված անձանց խումբը»: Հետքախումնային վերականգնման խնդիրներից են տեղահանվածների վերադարձի և կենսագործունեության ապահովումը, սկզբնական շրջանում անհրաժեշտ գոյամիջոցների նվազագույն փաթեթի ապահովումը, սեփական նախաձեռնությամբ արդեն վերադարձածների և բնակավայրերը չլրած մարդկանց խնդիրների լուծումը: Առանձնակի կարևոր է տարածքների ականազերծումը (մոտ 3000 հա վարելահող), որի հրականացման դեպքում սպասվում է, որ մշակովի հողատարածությունները կավելանան 25%-ով, կնվազի տագնապը: Ականազերծում չիրականացնելու դեպքում արտագաղթը ավելի կմեծանա: Սակայն միայն գյուղատնտեսությունը չի կարող լուծել գործազրկության խնդիրը: Անհրաժեշտ է զարկ տալ փոքր և միջին ձեռնարկատիրության գարգացմանը: Սահմանամերձ բնակավայրերի բնակչությանը պետք է լրիվ ապահովել բնակարաններով, բնակարանային շինարարությունը պետք է լինի պետության հովանավորության տակ, անհրաժեշտ է կտրուկ փոխել պետության վերաբերմունքը սահմանամերձ շրջանի վերաբերյալ, բարելավել ենթակառուցվածքները, ստեղծել նոր աշխատատեղեր, զարկ տալ բնակարանային շինարարությանը:

Սահմանամերձ յուրաքանչյուր գյուղ հզոր ամրոց է թշնամու դեմ, մեկ գյուղն իր բնակիչներով թշնամու դեմ անանցանելի պատճեշ է, գյուղը հոգևոր, հոգեբանական, բարոյական արժեք է, գյուղը լի է հին հիշատակներով, գյուղը կա իր երիտասարդներով: Գյուղի վրա ներդրած յուրաքանչյուր լումա կիատուցվի հազարապատիկ անգամ: Գյուղի կորուստը հայրենիքի կորուստն է:

Խնդրի լուծմանը կարելի է հասնել համապետական գործուն օրենքներով և ծրագրերով: Առաջին հերթին գյուղը կարիք ունի բնակարանային և ճանապարհային լայնածավալ շինարարության, առողջապահական և կրթական ենթակառուցվածքի բարելավման: Խնդրի չլուծման պատճառը համապետական օրենքների բացակայությունն է: Օրենքներ, որոնք կարող են «ստվերային» տնտեսության, «էլիտար» շինարարության միջոցներն ուղղել սահմանամերձ բնակավայրերին: Հակառակ դեպքում երբեք չի իրականանա «կայուն գարգացում» ծրագրը:

## **ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. ՀՀ ազգային վիճակագրական ծառայության Գեղարքունիքի մարզային գործակալություն. Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտսական վիճակը, Գավառ 2005, 2006, 2007, 2010, 2011:
2. Գեղարքունիքի մարզի զարգացման ծրագիր, Երևան, 2005:
3. **Ավագան Ա., Թորոսյան Մ., Պոկանյան Ա.** ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակչության շարժերի և սոցիալական պայմանների փոխկապակցությունների վելուծությունը. Աշխարհագրական գիտությունը Հայաստանում, Երևան, 2006:
4. [www.armstat.am](http://www.armstat.am)
5. [www.prsp.am](http://www.prsp.am)
6. [www.gegarkunik.argo.am](http://www.gegarkunik.argo.am)
7. [www.gegarkunik.gov.am](http://www.gegarkunik.gov.am)

### **АНАЛИЗ МИГРАЦИИ НАСЕЛЕНИЯ ПРИГРАНИЧНЫХ РАЙОНОВ ГЕГАРКУНИКСКОГО МАРЗА РА**

***A. A. Восканян***

Одной из важнейших социально-экономических проблем Гегаркуникского марза РА является миграция населения приграничных районов, принимающая угрожающие масштабы. Для предотвращения оттока населения необходимо в первую очередь решить проблему рабочих мест и трудообеспечения, что будет способствовать повышению социально-экономического уровня и приведет к стабилизации численности населения и миграционных процессов.

### **THE ANALYSIS OF MIGRATION PHENOMENA OF THE POPULATION OF BORDERLINE SETTLEMENTS OF GEGARKUNIK MARZ**

***A. A. Voskanyan***

One of important social-economical problems of Gegarkunik marz is the population migration, which takes threatening scales. To prevent the emigration first of all it is necessary to solve the problem of workplaces and employment which will contribute to the increase in social-economic level of the population and will lead to the stabilization of population and migratory processes.